ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.Դարպաս, 3-րդ փող. 5, Հեռ. (0322)6-06-24 , darpas.lori@mta.gov.am

N 267
15 դեկտեմբեր 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ եմ ներկայացնում Դարպաս համայնքի ավագանու թիվ 28-ից 34 որոշումները:
Առդիր՝ 1 ֆայլ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Արմեն Ալոյան**

Կատ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ն. Ալոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 28

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով.
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.
Հաստատել Դարպաս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

1.Դարպաս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս գյուղական համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը ահմանելու մասին:
3.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին:
4.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
5.Հանձնաժողով կազմելու մասին:
6.«Նախադպրոցական ուսումնական հաստատության» ՀՈԱԿ-ի աշխատանքները ժամանակավոր դադարեցնելու մասին:
7.Հողամասին նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ
2. ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 29-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ,ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1 8-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ ,14-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս գյուղական համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ
2. ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնքի ավագանու
2017 թ. դեկտեմբերի 11-ի թիվ 29-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **7500 (յոթ հազար հինգ հարյուր)** դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000 (տասնհինգ հազար)** դրամ,

- 500–ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25000 (քսանհինգ հազար)** դրամ,

-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25000 (քսանհինգ հազար)** դրամ,

-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000 (հիսուն հազար)** դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **1500 (հազար հինգ հարյուր)** դրամ.

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես շենքերի և շինությունների համար՝ **2500 (երկու հազար հինգ հարյուր)** դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով,

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 (հազար հինգ հարյուր) դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և , բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝

2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ 60000 (վաթսուն հազար) դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝օրացույցային տարվա համար՝ 18000 (տասնութ հազար) դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառքի իրականացնելու թույլտվության համար օրացույցային տարվա համար՝ 15000 (տասնհիգ հազար) դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա . ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

1500 (հազար հինգ հարյուր) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

3100 (երեք հազար հարյուր) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

4000 (չորս հազար) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

6500(վեց հազար հինգ հարյուր) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

8000 (ութ հազար) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

14000 (տասնչորս հազար) դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

1500 (հազար հինգ հարյուր) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

3100 (երեք հազար հարյուր) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

4000 (չորս հազար) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

6500(վեց հազար հինգ հարյուր) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

8000 (ութ հազար) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

14000 (տասնչորս հազար) դրամ:

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպաման թույլտվության համար՝

յուրաքանչյուր օրվա համար՝ 105 (հարյուր հինգ) դրամ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացույցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000(քսանհինգ հազար) դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ.

դ. խաղատների համար՝ 500000 (հինգ հարյուր հազար) դրամ.

գ. շահումով խաղերի համար՝ 250000(երկու հարյուրհիսուն հազար) դրամ.

դ. վիճակախաղերի համար՝ 100000 (հարյուր հազար) դրամ:

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 (երկու հազար) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000(երեք հազար) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500(չորս հազար հինգ հարյուր) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 (ութ հազար) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000(ինը հազար) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000(հազար) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500(հազար հինգ հարյուր) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5500 (հինգ հազար հինգ հարյուր) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9500(ինը հազար հինգ հարյուր) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000 (տասնմեկ հազար) դրամ:

11) ավազանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտոնական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000(երկու հազար) դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 (զրո) դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 (հազար հինգ հարյուր) դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ 100000 (հարյուր հազար) դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 (երեք հազար) դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ 500000 (հինգ հարյուր հազար) դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 (հինգ միլիոն) դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 (յոթ միլիոն) դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 (տասը միլիոն) դրամ:

<u>ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ</u>

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 (հինգ հազար) դրամ,
2)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքի կամ շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ,
3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 (հինգ հազար) դրամ,
4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 (երկու հազար) դրամ,
5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 4000 (չորս հազար) դրամ,
6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000(հինգ հազար) դրամ,
7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝
ա. Կենցաղային աղբի համար՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար վճար՝ամսական 100 (հարյուր) դրամ,
բ. Ուսումնական հաստատությունների աղբահանության վճար՝ յուրաքնչյուր աշակերտի համար ամսական 13 (տասներեք) դրամ,
գ. Հասարակական սննդի կետերի, ռեստորանների աղնահանության վճար՝ 1 քառակուսի մետրի համար ամսական 103 դրամ,
դ. Խանութների աղբահանության վճար՝ 1 քառակուսի մետրի համար 40 (քառասուն) դրամ,
ե. Արտադրական ձեռնարկությունների աղբահանության վճար՝ յուրաքանչյուր աշխատողի համար՝ ամսական 40(քառասուն) դրամ ,
զ. Հանդիսությունների սրահների աղբահանության վճար՝ 1 քառակուսի մետրի համար ամսական 40(քառասուն) դրամ
ե.Ոչ կենցաղային և խոշոր եզրափակիչ աղբի համար՝1 խորանարդ մետր աղբի համար՝ 0 (զրո) դրամ:
8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրզչզփի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրզչափի աղբի մեկ խորա-

նարդ մետրի համար սահմանված դրույքաչափի 20 % -ի չափով՝ 600(վեց հարյուր) դրամ,

9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների հա - մար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափը սահմանել՝ 6000(վեց հազար) դրամ,

10) համայնքային ենթակայության արտադպրոցական դատիարակության հաստա - տությունների (երաժշտական խմբակի) ծառայություններից օգտվողների համար ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափը սահմանել՝

ա. առաջին դասարանի համար՝ 1500 (հազար հիգ հարյուր) դրամ,

բ. երկրորդ և բարձր դասարանների համար ՝ 2000 (երկու հազար) դրամ:

11) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ մեկ փաս- տաթղթի համար՝ 0 (զրո) դրամ :

Համայնքի ղեկավար /Ա.ԱԼՈՅԱՆ /

11 դեկտեմբերի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 30-Ն

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի, 5-րդ կետով.
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Դարպաս համայնքի 2018 թվականի բյուջեն:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ
2. ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 31

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 03-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 18-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների , զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 Դեմ- 0 Ձեռնպահ -0

1.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ
2.ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
3.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ
4.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 11-ի N 31 որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Մնացականյան Սենիկ Մկրտիչի - 35000 (երեսունհինգ հազար) /ung. օգնություն/
2. Մարուքյան Արեգնազ Նորիկի - 50000(հիսուն հազար) /ung. օգնություն/
3. Զարգարյան Զոյա Սամվելի -50000(հիսուն հազար) /ung. օգնություն/
4. Հակոբյան Լիլիթ Ռուդիկի -50000(հիսուն հազար) /ung. օգնություն/
5. Վարդանյան Անահիտ Արտաշեսի -50000(հիսուն հազար) /ung. օգնություն/
6. Աբազյան Ցողիկ Արտուշի -50000(հիսուն հազար) /ung. օգնություն/
7. Կարոյան Սուսաննա Խաչատուր -50000(հիսուն հազար) /ung. օգնություն/
8. Կարապետյան Մանուշ Վանցիկի -15000(տասնհինգ հազար) /ung. օգնություն/
9. Սարոյան Սաթիկ Մաթոսի -50000(հիսուն հազար) /ung. օգնություն/
10. Ղուկասյան Մանե Լյովիկի -50000(հիսուն հազար) /ung. օգնություն/
11. Ասլանյան Ալվարդ Ժորայի -50000(հիսուն հազար) /ung. օգնություն/
12. Խաչատրյան Լուսյա Վլադիմիրի -50000(հիսուն հազար) /ung. օգնություն/
13. Դոդոռյան Կամո Ջիվանի -50000 (հիսուն հազար) /ung. օգնություն/
14. Տոներյան Արման Համազասպի - 10000(տաս հազար) /ung. օգնություն/
15. Սիմոնյան Սվետլանա Լևոնի- 20000 (քսան հազար) դրամ / հարազատի հուղարկավորության գումար/
16. Ավետյան Թեմուր Սամսոնի - 20000 (քսան հազար) դրամ / հարազատի հուղարկավորության գումար/
17. Թովմասյան Աղասի Սերգոյի -20000 (քսան հազար) դրամ / հարազատի հուղարկավորության գումար/
18. Մխիթարյան Վահե Անդրեյի -20000 (քսան հազար) դրամ / հարազատի հուղարկավորության գումար/
19. Համբարձումյան Կարինե Սուրենի - 20000 (քսան հազար) դրամ / հարազատի հուղարկավորության գումար/
20. Ալոյան Արմեն Նորիկի – 10000 (տաս հազար) դրամ / երեխայի ծննդյան գումար/
21. Հովսեփյան Լուսինե Լեոնիկի – 10000 (տաս հազար) դրամ / երեխայի ծննդյան գումար/

Ընդամենը ՝ 730000 (յոթ հարյուր երեսուն հազար) դրամ:

Դարպաս համայնքի ղեկավար՝ Արմեն Ալոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 32

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72 հոդվածին համապատասխան՝
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝
1.Նաիրա Ալոյան-համայնքի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
2.Անահիտ Վարդանյան-համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ -հաշվապահ, հանձնաժաղովի նախագահի տեղակալ,
3.Արթուր Աբրահամյան-համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ, հանձնաժողովի քարտուղար,
4.Արմեն Ասլանյան-ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ(համաձայնությամբ)
5.Կարեն Կիրակոսյան-ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ(համաձայնությամբ)
6.Կորյուն Վարդանյան- համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ(համաձայնությամբ)
2.Ուժը կորցրած ճանաչել Դարպաս համայնքի ավագանու հունիսի 07-ի «Հանձնաժողով կազմելու մասին» թիվ 14-Ա որոշումը:
3.Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել դրանք համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 7-օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

Կողմ – 4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ

2.ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

3.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ

4.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 33

«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ» ՀՈԱԿ-Ն ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածով.
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

Դարպաս համայնքի «Նախադպրոցական ուսումնական հաստատության» ՀՈԱԿ-ն աշխատանքները ջեռուցման պատճառով 2018թ-ի հունվար ամսին ժամանակավոր դադարեցնել:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ
2. ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13 կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ և 30-րդ կետերով, հիմք ընդունելով«Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 13.11.2017թ. թիվ 135 դրական եզրակացությունը. Համայնքի ավագանին որոշում է.

1. Դարպաս համայնքի քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.1 հա 06-033-0001-0029 ծածկագրի հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառական նշանակության:
2. Թույլատրել համայնքի ղեկավար Ա. Ալոյանին օրենքով սահմանված կարգով կատարել հողամասի նպատակային նշնակության փոփոխությունը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ
2. ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**